

ՍԱՂՄՈՍ 48

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Սիոնի գեղեցկությունն ու փառքը	Աստծո փառքը Սիոնում	Սիոնի գեղեցկությունը և ապահովությունը գովերգող երգ	Սիոնը՝ Աստծո քաղաքը	Սիոնը՝ Աստծո լեռը
<u>MT ներածություն</u> Կորիսի որդիների երգն ու սաղմոսը				
48:1-3	48:1-3	48:1-3	48:1-3	48:1-3
48:4-8	48:4-7	48:4-8	48:4-7	48:4-5 48:6-7
	48:8		48:8	48:8
48:9-14	48:9-11	48:9-11	48:9-11	48:9-10բ 48:10գ-13բ
	48:12-14	48:12-14	48:12-14	48:13գ-14

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը Աստծո հատուկ քաղաքի և ժողովրդի մասին է: Նա նրանց հետ է և նրանց համար: «Քաղաքի» նկարագրության համար տե՛ս Եսայի 26, Համատեքստային Հասկացություններ, Դ, առցանց www.freebiblecommentary.org

Բ. Արդյո՞ք այս Սաղմոսից կարելի է ենթադրել, որ Իսրայելում Երուսաղեմը լինելու է նոր դարաշրջանի մայրաքաղաքը:

- Գ. Այս Սաղմոսի տերմինաբանությունը կիրառելով ինչպե՞ս կարող եք բացատրել պատմության ընթացքում շատ տարբերի ազգերի կողմից Երուսաղեմի գրավումը, թալանումը և նվաճումը:
- Դ. Ես դժվարություն եմ ունեցել այս հարցի շուրջ, քանի որ սա համարվում է հազարամյայի շուրջ տեսությունների սիրտը: Խնդրում եմ նայեք իմ հետևություններին՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԿ ԿԱՆԽԱՍՈՒՄՆԵՐԸ Ի ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՆԿՅԱՆ ԿԱՆԽԱՍՈՒՄՆԵՐԻ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 48:1-3
¹Մեծ է ՏԵՐԸ և մեծ փառաբանության արժանի՝
Մեր Աստծո քաղաքում, Իր սրբության լեռան վրա:
²Գեղեցիկ դիրքով՝ ամբողջ երկրի ուրախությունն է Սիոն լեռը,
Հյուսիսային կողմում, մեծ Թագավորի քաղաքը:
³Աստված նրա պալատներում իբրև ապավեն է ճանաչված:

48:1-3 Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչքան տարբեր կերպերով են բնութագրվում Երուսաղեմն ու իր տարբեր բլուրները:

1. մեր Աստծո քաղաքը, Սաղմ. 48:1
2. Նրա սուրբ լեռը, Սաղմ. 48:1
3. գեղեցիկը բարձրերում (BDB 832, ՀԿ-ում միայն այստեղ է, հավանաբար գերադրական աստիճանը՝ գեղեցկագույնը)
4. ամբողջ երկրի ուրախությունը, Սաղմ. 48:2
5. Սիոն Լեռը հեռու հյուսիսում (կամ «հյուսիսը» = Սաֆոն, քանանացիների աստվածների սարը՝ Ուգարտայի հյուսիսում, տես՝ NIDOTTE հատոր 3, էջ՝ 836), Սաղմ. 48:2
6. մեծ Թագավորի քաղաքը, Սաղմ. 48:2
7. Աստված նրա պալատներում իբրև ապավեն է ճանաչված, Սաղմ. 48:3

Այս նկարագրությունները վերաբերում են թե՛ տաճարին՝ Մորիա լեռան վրա, և թե՛ ամբողջ Երուսաղեմ քաղաքին, հաճախ Սիոն անունով:

48:1 «մեր Աստծո քաղաքը» Այս արտահայտությունը կարող է վերաբերել մի քանի հասկացությունների:

1. Մեքիստեղեկի հետ առնչվող քաղաքը՝ Ծննդ. 14:18 (այսինքն՝ Սաղեմը)
2. ՅԱՀՎԵԻ անվան բնակատեղի քաղաքը՝ 2 Օր. 12:5, 11, 21, 14:23, 24, 16:2,6, 11, 26:2
3. Այն քաղաքը, որը Դավիթը գրավեց քանանացիներից (այսինքն՝ Հերուսը), որը հետագայում դարձավ նրա մայրաքաղաքը՝ 1 Թագ. 5:7,9
4. պատուհասը կանգնեցնող Տիրոջ հրեշտակի հետ կապված քաղաքը, որը գնվեց Դավթի կողմից որպես ապագայում կառուցվող տաճարի տեղանք՝ 2 Թագ. 24:15-17,18-25, 2 Մնաց. 3:1 (այսինքն՝ Մորիա լեռը, հավանաբար Իսահակին զոհաբերելու տեղանքը՝ Ծննդ. 22:2):
5. Սիոնը, նույն Հերուսը՝ 2 Թագ. 5:7, 1 Մնաց. 11:5 (այսինքն՝ ամբողջ Երուսաղեմ քաղաքը նկատի ունենալու կերպ, չնայած որ այն կառուցվել է յոթ բլուրների վրա, Սիոնը դարձավ ընդհանուր անունը):

Սաղմոս 48-ի խնդիրը 2-րդ համարն է. «Սիոն լեռը, հյուսիսային կողմում»: Սրանք միայն տեսություններ են:

1. սա փոխաբերություն է Երկնքի համար, որտեղ ապրում է ՅԱՀՎԵՆ՝ Եսայի 14:13ա,բ, Հայտն. 3:12, 21:2,10
2. ինչպես և մյուս Սաղմոսները այն կապակցված է քանանացիների որոշ դիցաբանական տերմինաբանության հետ (այսինքն՝ Չաֆոն – Եբրայերենի «հյուսիսը», BDB 8) – Եսայի 14:13գ,դ, Եզեկ. 28:14:

ՀՄԱ-ի կրոնավոր մտայնության մեջ ընդունված էր աստվածներին դիտարկել որպես լեռների գագաթներին ապրողներ (տես՝ Գիլգամեշի Էպոսը): Սա հատկապես ճիշտ է Ռաս Շամրայից Ուգարտական *Բահադի* առասպելից: Աստվածները հանդիպում և ապրում էին հյուսիսային Չաֆոն կոչվող լեռան վրա: *Բահադը* այնտեղ գահ ուներ, որը կառուցել էր Անաթը: Փյունիկյան արական սեռի պտղաբերության աստծո պաշտամունքը կոչվում էր *Բահադ Չաֆոն*: Այս անունը գտնվել է Միջերկրականի շուրջ գտնվող Փյունիկյան գաղութներում: Հյուսիսային լեռան այս ավանդույթը, որն ընդհանրապես կապ չուներ Իսրայելի սուրբ Մորիա լեռան հետ (տես՝ Եզեկ. 20:40), կարծես թե հանդիսանում է Ես. 14:13-15 և Եզեկ. 28:14,16-ի նկարագրության աղբյուրը: Տես՝ Ռոլանդ դե Վոի *Հին Իսրայելը*, հատոր՝ 2, էջ՝ 279-281:

3. Որոշ գիտնականներ առաջարկում են եբրայերեն բաղաձայնների այլ բաժանում՝ «Քաղաքի հյուսիսային կողմում»:

«Քաղաքի» հասկացությունը որպես ՅԱՀՎԵԻ հատուկ ներկայության համար բնակատեղի, շարունակվում է ՆԿ-ում:

1. Եբր. 11:10 – «որովհետև նա (Աբրահամը) սպասում էր այն քաղաքին, որ հիմքեր ունի, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է»
2. Եբր. 12:22 – «դուք եկել եք Սիոն լեռանը և Կենդանի Աստծո քաղաքին՝ երկնային Երուսաղեմին»:
3. Եբր. 13:14 – «մենք այստեղ մնայուն քաղաք չունենք, այլ որոնում ենք այն, որ պիտի գա»:
4. Հայտն. 3:12 – «Իմ Աստծո քաղաքի անունը, նոր Երուսաղեմ, որ իջնում է երկնքից, Իմ Աստծուց»
5. Հայտն. 21:2,10 – «քաղաքը՝ Նոր Երուսաղեմը, որ երկնքից՝ Աստծուց էր իջնում»:

❖ **«սար»** ՀՄԱ-ի համար, սարերը աստվածների տունն էին համարվում: Բարեկոնում, որը չուներ բնական սար, այլ նրանք կառուցում էին բարձր աշտարակներ (այսինքն՝ սիգուրատներ, տես՝ Ծննդ. 11:3-4) մի վայրի համար, որտեղ երկինքն ու երկիրը կհանդիպեն:

Իսրայելի պատմության մեջ կան մի քանի կարևոր սարեր՝

1. Մինա լեռը, որտեղ ՅԱՀՎԵՆ հանդիպեց Իսրայելի հետ և նրան օրենքը տվեց (տես՝ Ելից 19-20)
2. Սիոն լեռը՝ Դավթի քաղաքը (Սաղեմ /Ծննդոց 14/, հետագայում Հերուս /2 Թագ. 5:6-10/)
3. Մորիա լեռը՝ տանարի տեղանքը (տես՝ Ծննդոց 22)
4. այս Սաղմոսում Սիոն լեռն ավելի մեծ է, քանի Չաֆոնը՝ քանանացիների աստվածների լեռը (համազոր է Օլիմպ լեռանը՝ հունական պանթեոնի համար), քանի որ ՅԱՀՎԵՆ ավելի մեծ է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 48:4-8

⁴Քանի որ ահա թագավորները հավաքվեցին,
Միասին եկան ու անցան:

⁵Նրանք տեսան դա ու զարմացան .
Չարհուրեցին ու շտապեցին հեռանալ:

⁶Մարսափ պատեց նրանց այնտեղ, ու ցավ
Երկունքի մեջ եղող կնոջ ցավի պես:

⁷Արևելյան քամիով Դու խորտակում ես Թարսիսի նավերը:
⁸Ինչպես լսեցինք, այնպես էլ տեսանք,
Չորությունների ՏԻՐՈՉ քաղաքում՝ մեր Աստծո քաղաքում .
Աստված այն հաստատելու է հավիտյան: Սեյա:

48:4-8 Այս պարբերությունը կենտրոնանում է այս աշխարհի վրա Աստծո քաղաքի թողած ազդեցության վրա (տես՝ Սաղմ. 48:2ա, 10բ): Նկարագրությունը առաջարկում է վախ և ահազանգ՝ Աստծո զորության և ներկայության հիման վրա, այս հատուկ և հավիտենական քաղաքում (տես՝ Սաղմ. 48:8բ,գ):

Ինչպես որ ազգերի թագավորները թշնամաբար էին տրամադրված Սաղմոս 2-ում, այնպես էլ այստեղ է: Իրական ընդհարում կա Սուրբ Գրքի աշխարհայացքի և հեթանոսների բազմաստված-ծության պաշտամունքի միջև: Այս աներևույթ, սակայն իրական ընդհարումը բոլոր դարերի և յուրաքանչյուր մշակույթի մասն է կազմում: Ընդհարումը պայմանավորված է միաստվածության յուրահատկության՝ բացառիկության հետ:

48:6 «երկունքի մեջ գտնվող կնոջ պես» Սա տարածված սուրբգրային փոխաբերություն է վախի, ցավի, և հանկարծակի վշտի համար (տես՝ Եսայի 13:8, 21:3, 26:17, Երեմ. 4:31, Ովս. 13:13, Միքիա 4:9, Հովհ. 16:21, Մարկ. 13:8, 1 Թեսաղ. 5:3):

48:7 «արևելյան քամի» Սա տաք անապատային քամի էր (այսինքն՝ sirocco, արաբերեն «արևելք» տերմինից), որը չորացնում էր բերքը, բերում էր մորեխներ, և հանդիսանում էր բնաջնջման համար որպես փոխաբերություն (տես՝ Երեմ. 18:17, Եզեկ. 17:10, Ովս. 13:15, Հովնան 4:8):

❖ **«Թարսիսի նավերը»** Թարսիսի ստույգ տեղանքը անհայտ է, սակայն աշխարհագրական դիրքը Միջերկրականի արևմտյան եզրին է, որը մատնացույց էր անում ՅԱՀՎԵԻ տիեզերական իշխանությունը: Այս նավերը ամենամեծն էին, ամենաապահովը, Միջերկրականից օվկիանոս մտնող անոթներ: Դրանք գործության և առևտրի խորհրդապատկեր էին հանդիսանում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԹԱՐՄԻՍ (վայր)
SPECIAL TOPIC: TARSHISH (place)

1. Բառն ինքնին ունի անհայտ նշանակություն: Եղել են երկու հիմնական ենթադրություններ:
 - ա. Աքքադերենից «հալոցի» համար (բառացի՝ «տաքացնել», տես՝ Օլբրայթ /Albright/)
 - բ. հունարենից «թիակի» համար (Հավանի որդին կապված էր ծովային ազգերի՝ կիտացիների և դոդացիների հետ):
2. Բառն ինքնին կարող է նկատի ունենալ՝
 - ա. անձ (այսինքն՝ Հավանի չորս որդիներից մեկը, տես՝ Ծննդ. 10:4)
 - բ. զարդ (այսինքն՝ Քահանայապետի լանջապանակի վրա ընդերուզված քարերից մեկը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԶԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԼԱՆՋԱՊԱՆԱԿԸ, տես՝ Ելից 28:20, 39:13, Եզեկ. 28:13)
 - գ. նավի տեսակ (հավանաբար՝ 3 Թագ. 9:26-27, Եսայի 2:16, 60:9)
 - դ. բեռի տեսակ (հավանաբար՝ 3 Թագ. 10:22, 1 Մնաց. 9:21)
 - ե. վայր (տես ստորև տրված գրառումը, 2 Մնաց. 20:36-37)
3. Այս վայրի անունը (BDB 1076 II, KB 1779 I) կարող է վերաբերել
 - ա. հարավային Իսպանիայում Ատլանտյանի ափին գտնվող մի քաղաքի, որը Փյունիկյան գաղութ էր (այսինքն՝ Թարսիսը, Ես. 23:6, հավանաբար մերօրյա Սեվիլիան): Հերոդոտոսը նույնպես նշում է սա իր 1. 163, 4:152-ում:
 - բ. Սարդինիայի մի կղզի (այսինքն՝ արձանագրություն կա Զ. Ա. 9-րդ դարի, որտեղ նշվում է «Թարսիս» անունով մի քաղաք. տես՝ Օլբրայթ 1961. 346-347):
 - գ. հյուսիսային Աֆրիկայի ափին գտնվող մի քաղաք (Կարթագենը Փյունիկեի գաղութներից էր. LXX Եզեկ. 27:12-ից):
 - դ. հեռու մի տարածքում գտնվող նավահանգստի նկարագրություն (հավանաբար կապված Էսրոն-Գաբեր կամ Կարմիր Ծովի հետ, KB 1797, տես՝ Սաղմ. 72:10, Եզեկ. 38:13):
 - ե. մի տեսակ ծովագնաց առևտրային մեծ նավ (տես՝ 3 Թագ. 10:22, 22:48, Ես. 23:1,14):

Հովնանի գիրքը արձանագրում է, որ այն գտնվում է Իսրայելի արևմտյան մասում (տես՝ Հովնան 1:3, 4:2), սակայն ինչքան հեռու է՝ չի ասվում: Ենթատեքստով սակայն այս քաղաքն այնքան հեռու էր, որ Հովնանը կարծում էր Իսրայելի Աստծուց կարող էր հեռանալ:

48:8 «Սելա» Տես Սաղմ. 3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածությունը, VII:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 48:9-14

⁹Ո՛վ Աստված, Քո գթասիրության մասին ենք մտածում Քո տաճարում:

¹⁰Ինչպես Քո անունը, ո՛վ Աստված,

Այնպես էլ Քո փառաբանությունը մինչև երկրի ծայրերն է հասնում.

Արդարությամբ է լեցուն Քո աջ ձեռքը:

¹¹Սիոն լեռը թող ուրախանա՛,

Հուդայի աղջիկները թող ցնձան Քո դատաստանների համար:

¹²Պատվեցե՛ք Սիոնի շուրջը, շուրջբոլորը քայլեցե՛ք.

Հաշվեցե՛ք նրա աշտարակները.

¹³Ուշադրություն դարձրե՛ք նրա պարիսպներին,

Դիտեցե՛ք նրա պալատները, որպեսզի պատմեք հաջորդ սերնդին:

¹⁴Քանի որ այս Աստվածը մեր Աստվածն է հավիտյանս հավիտենից.

Նա մեր առաջնորդն է յինելու մինչև մահ:

48:9-14 Այս պարբերությունը մեծարում է ՅԱՀՎԵԻՆ՝

1. նրանք շարունակում են մտածել Նրա բարեգթության մասին (այսինքն՝ ուխտի հավատարմության, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (HESED))
2. Նրա ներկայությունը Երուսաղեմի տաճարում
3. Նրա անվան (բնավորությունը՝ գործերը) փառաբանությունը մինչև երկրի ծայրերը
4. Նրա աջ ձեռքը (այսինքն՝ իշխանությունը, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ) լեցուն է արդարությամբ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ)
5. Հուդայի քաղաքները (այսինքն՝ աղջիկները) ցնձում են Նրա դատաստանների համար (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐ, ԴԱՏԱՍՏԱՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ)
6. ուշադրություն դարձրե՛ք նրա գեղեցիկ քաղաքին
7. Նա հավիտյանս հավիտենից է

48:11-13 Գոյություն ունեն մի շարք հրամաններ՝

1. Սիոն լեռը թող ուրախանա – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
2. թող Հուդայի աղջիկները ցնձան – BDB 162, KB 189, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով
3. պատվեցե՛ք Սիոնի շուրջը – BDB 685, KB 738, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. շուրջբոլորը քայլեցե՛ք – BDB 668, KB 722, *Hlphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. հաշվեցե՛ք նրա պարիսպները/աշտարակները – BDB 707, KB 765, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
6. ուշադրություն դարձրե՛ք նրա պարիսպներին - BDB 1011, KB 1483, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
7. դիտեցե՛ք նրա պալատները – BDB 819, KB 946, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Սրանք հնարավոր է նկատի ունեն տոնախմբությանը (տես՝ Սաղմ. 26:6) ինչպես (1) Հեսուն պատեց Երիքով քաղաքի շուրջ յոթն անգամ, տես՝ Հեսու 6:3-15, կամ (2) Նեեմիայի մեջ Երուսաղեմի պարիսպների ընծայումը՝ սրբագործումը, տես՝ Նեեմիա 12:

❖ «**աշտարակներ**» Այս բառը (BDB 153) վերաբերում է «դիտակետ աշտարակներին» (տես՝ 4 Թագ. 9:17, 17:9, 18:8) և աղեղնավորներին (տես՝ 2 Մնաց. 26:9,10,15, 32:5, Նեեմ. 3:25-27, Եսայի 2:15):

❖ «**պատնեղները/պարիսպները**» Այս բառը (BDB 298) վերաբերում է կա՛մ՝

1. շրջապատող պատերին՝ պարիսպներին՝ Եսայի 26:1, Ողբ 2:8, Նաում 3:8
2. արտաքին երկու պատերի միջև տարածությունը՝ 2 Թագ. 20:15, Ողբ 2:8

❖ «պալատներ (կամ «սրահներ»)» Այս բառը (BDB 74) կարող է նկատի ունենալ որևէ ընդարձակ շինություն՝ պարսպապատ քաղաքի ներսում (տես՝ 4 Թագ. 15:25, 2 Մնաց. 36:19, Առակ. 18:10, Ես. 32:14, Երեմ. 17:27, Ողբ 2:5, 7, Ովս. 8:14. Ամովս 2:5, 6:8, Միքիա 5:5):

Այս տերմիններից բոլոր երեքն էլ հավաքական առումով կմատնանշեն ՀՄԱ-ի հզոր և պարսպապատ քաղաք: Սակայն նրա իրական գորությունը և հաստատությունը կայանում էր նրանում, որ ՅԱՀՎԵՆ էր բնակվում այնտեղ:

48:14

NASB

NKJV

NRSV

JPSOA

LXX

REB

«մինչև մահ»

«անգամ մինչև մահ»

«հավիտյան»

«ընդմիշտ»

«դարեր շարունակ»

«մշտապես»

«Մինչև մահ» և «հավիտյան» խոսքերի միջև տարբերությունն այս է՝

1. որտեղ առանձնացնել երբայերենի բաղաձայնները
2. ձայնավորները, որոնք ավելացվեցին Մագորեթիկ գիտնականների կողմից երբայերեն տեքստին

Կա երրորդ տարբերակ բանաստեղծության այս տողը հասկանալու համար: Այդ նույն երբայերեն տերմինը կարող է վերաբերել երաժշտական տոնայնության՝ «ըստ Ալամոթի» (տես՝ Սաղմոս 46-ի վերնագիրը): Եթե այդպես է, ապա սա կհամընկնի Սաղմոս 49-ի հետ: Հնարավոր է, որ հենց սա է պատճառը, որ NJB թարգմանությունը բաց է թողնում այս տողը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք այս Սաղմոսը նկատի ունի ինչ-որ պատմական դեպք, թե էսկատոն է:
2. Կլինի արդյո՞ք Երուսաղեմը նոր դարաշրջանի մայրաքաղաքը:
3. Ինչո՞ւ է Սաղմ. 48:2 այսքան հակասական: Արդյո՞ք Աստվածաշնչի հեղինակները գործածում էին հեթանոսական աղբյուրներից տերմիններ կամ պատկերներ:
4. Արդյո՞ք Սաղմ. 48:4-8 նկարագրում է Սաղմոս 2-ի պես իրադարձություն:
5. Թվարկե՞ք այս Սաղմոսում տիեզերական՝ համընդհանուր տարրերը:
6. Արդյո՞ք Սաղմ. 48:12-13 նկարագրում է ծիսական տոնախմբություն: Եթե այդպես է, կա՞ն արդյոք նմանօրինակ դեպքեր ՀԿ-ում: